ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԿԳՄՄՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Անցկացման վայրը՝ ՄԱՐՏՈՒՆԻ

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Սյուզաննա Գալոյան

Դպրոց՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գետաշեն գյուղի միջնակարգ դպրոց

Մարտունի 2022թ.

Բովանդակություն

1.Ներածություն 3

2. Գրական ակնարկ 3

3. Փորձարարական հետազոտություն 8

3.1-Խմբի նկարագիրը 8

3.2-Փորձարարական դասեր 8

3.2.1-Փորձարարական դաս-1 8

3.2.2-Փորձարարական դաս-2 9

4. Եզրակացություն 10

5. Օգտագործած գրականության ցանկ 101

6. Հավելված 122

Դասապլան-1 122

Դասապլան-2 166

1.Ներածություն

Հասարակությունն ինքնագիտակցության կարող է հասնել բոլոր հասարակական-հումանիտար գիտությունների շնորհիվ: Այդ համակարգում իր առանձնահատուկ տեղն ունի պատմությունը: Անհնար է լիարժեք ճանաչել ներկան, դրա տարածաժամանակային բնութագրերը, էական կողմերը, զարգացման միտումները առանց դրանց պատմական հիմքերը բացահայտելու: Հասարակական զարգացման ցանկացած օրինաչափություն կարող է ճանաչվել պատմության լույսի ներքո, պատմական դիտարկման միջոցով: Այժմ պատմականությունը բնութագրական է բոլոր գիտությունների համար: Միայն դրա միջոցով և անցյալի փորձի անկողմնակալ, համակողմանի ուսումնասիրությամբ կարելի է բացահայտել գիտական գիտելիքների, այդ թվում՝ հասարակական-հումանիտար գիտությունների զարգացման օրինաչա-փությունները:

Բոլոր ժամանակներում պատմության դասավանդման հարցը դիտվել է որպես կարևորագույն խնդիր: Մեր օրերում նրա դերը կարծես առավել կարևորություն է ձեռք բերել, քանզի այն ընդունակ է ձևավորել և զարգացնել մարդկային այնպիսի որակներ, որոնք 21-րդ դարում դարձել են հրատապ:

Պատմությունն առաջին հերթին սերունդների միջև անքակտելի կապի միջոց է, հատուկ միջոց է ինքնաճանաչողության, սեփական ազգի և հայրենիքի առանձնահատկություններին ծանոթանալու, աշխարհում դրանց տեղը արժևորելու համար: Այսօրվա դրությամբ հանրակրթական դպրոցում պատմության դասը երեխաների բարոյական, մտավոր և մշակութային զարգացման գործում ակներև դեր է ստանձնել: Այն նպաստում է նաև սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, վերլուծական մտածողության զարգացմանը, բարոյական արժեքների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը: Պատմական գիտելիքները հոգևոր մշակույթի անհրաժեշտ տարրեր են: Նրանք ստեղծում են այն ելակետերը, առանց որոնց անհնար է հասարակության հետագա առաջընթացը: Պատմությունը և ընդհանրապես հումանիտար գիտությունները սերունդներին դաստիարակում են մարդկայնության, բարու, արդարության ոգով: Պատմական փորձը մարդու և հասարակության ինքնագիտակցման ու

ինքնաճանաչման միջոց է: Մարդու և հասարակության պատմության առարկան ու հիմնական գործառույթները ներկայացնելուց հետո առանձնակի հետաքրքրություն է ձեռք բերում պատմական գիտելիքի բնույթի, առանձնահատկությունների պարզաբանման հարցը:

Հայոց պատմություն առարկայի հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

•Ձևավորել ազգային պետականության գաղափարը կրող, ազգային դիմագիծ և ինքանգիտակցություն ունեցող, սեփական ազգի ու հայրենիքի դերակատարումը համաշխարհային պատմության մեջ գիտակցող հայ,և նպաստել ազգային և համամարդկային արժեհամակարգ ունեցող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

Պատմություն առարկայի առաջարկվող գործունեության ձևերն են.

• Հետազոտի հայկական քաղաքակրթության ձևավորման և զարգացման ընթացքը, ձեռքբերումներին ու բացթողումները

•Հասկանա պատմական իրադարձությունները, երևույթները, փաստերը, դրանց փոխկապակցվածությունն ու պատճառահետևանքային կապերը

•Ցույց տա հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ

•Զարգացնի քննադատական մտածողությունը, հետազոտելու, աղբյուրների հետ աշխատելու, հաղորդակցվելու, վերլուծելու, գնահատելու, հարցադրումներ կատարելու, լսելու, քննարկելու, բանավիճելու, սեփական տեսակետներն ու դիրքորոշումնեևը հիմնավորելու, որոշումներ կայացնելու կարողություններն ու հմտությունները

•Ցույց տալ սերունդների կապը պատմության մեջ:

2. Գրական ակնարկ

Պատմության դասաժամերին ամբողջ դասարանին դասապրոցեսի մեջ ներգրավելու համար չափազանց կարևոր է ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների, կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում, որպեսզի երեխան դեռ մանկուց սովորի արժևորել ու հարգել սեփական պատմությունը և դպրոցում ու տանը չառնչվի հայոց պատմության նկատմամբ ակնհայտտարբեր վերաբերմունքների հետ:

Դասարանի հետ, աշխատելու իմ մեթոդը՝ այս անգամ «ոլորահատ սղոց» մեթոդն էր, որը սովորական խաղ է, այս մեթոդի անցկացման հիմնական սկզբունքը հետևյալն է.

- Սովորողներին բաժանել փոքր խմբերի:
- Յուրաքանչյուր խմբի տալ հիմնական թեմայի ենթաթեմա կամ ենթակատեգորիա:
- Հանձնարարել նրանց ուսումնասիրել տրվածները և զարգացնել իրենց գաղափարները:
- Յուրաքանչյուր խումբ կիսվում է իր գտածոներով՝ մեծ պատկեր ստեղծելու համար, որը ամբողջ գիտելիքներն են այն թեմայի վերաբերյալ, որը նրանք պետք է իմանան:

Պատմության դասվանդման ընթացքում, սովորողները կարդում են տեքստեր պատմական իրադարձության, այսինքն՝ ենթադրենք Սրևանի ճակատամարտի վերաբերյալ և տեղեկություններ են հավաքում՝ դրա մասին ավելին հասկանալու համար: Ենթաթեմաները կարող են լինել հայտնի քաղաքական գործիչներ, հիմնական մարտիկներ, պատճառներ, ժամանակացույցեր, նախապատերազմյան իրադարձություններ կամ պատերազմի հայտարարություն, պատերազմի ընթացք և այլն:

Այդ է պատճառը, որ ծնողի կամ օրինական ներկայացուցչի ներգրավվածությունը երեխայի կրթության գործընթացում՝ ավելի առարկայական դարձնելու համար, ծնողների և օրինական ներկայացուցիչների համաձայությամբ որոշեցի այս դասարանի

պատրաստավծությունը ստուգելու համար, հենց «ոլորահատ սղոց» մեթոդն ընտրել և ծնողների ներկայությամբ էլ այն անցկացնել:

Դրական կողմերը

Երբ ծնողը կամ օրինական ներկայացուցիչը ներգրավված են երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպասին է ընտանիքի սոցիալ – տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը: Միաժամանակ ծնողների հետ ակտիվ համագործակցումն օգնում է ավելի ինքնավստահ դառնալուն:

- Ուսուցչի մոտ հանդես է գալիս ավելի հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ.
- Նրանք ավելի են բավարարված իրենց մասնագիտությունից և նրա արդյունքներից.

Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա:

Մեծաքանակ աշակերտներով դասարան(ներ)ում ժամանակի սղության պատճառով հնարավոր չի լինում անհրաժեշտ ուշադրություն դարձնել, բավարար րոպեներ տրամադրել այս կամ այն աշակերտի գիտելիքների հիմնովին ստուգմանը /և ոչ միայն/՝ անկախ նրա առաջադիմությունից, ակտիվությունից և այլնից… Աշակերտի վարքի, համադասարանցիների հետ հարաբերություններում հարգանքի, ընկերասիրության, զսպվածության, ինքնատիրապետման ցուցաբերման, կոլեկտիվում ինքնադրսևորման ու միասնության պահպանման, այսինքն՝ լայն իմաստով անձի

ձևավորման ու դաստիարակության հարցերը արդյունավետ լուծելու համար ուսուցիչը պետք է պատրաստակամ լինի լսելու և տվյալ աշակերտի հետ անհատական աշխատանքը պլանավորելիս նկատի ունենալու նաև ծնողի կարծիքը:Աշակերտին ճանաչելու, նրա հոգեբանությունն ու վարքը արագ ըմբռնելու, աշակերտի վրա ազդելու, ներգործելու հարցերում ծնողի դերն անփոխարինելի է: Ծնողն իր հերթին պիտի լսի և ընդունի այն նկատառում-դիտողությունները, որն անում է ուսուցիչը, եթե անգամ շատ դեպքերում համաձայն չէ: Եվ որպեսզի ծնողը անտեղի չհակադրվի ուսուցչին,ինքնանպատակ քայլեր չանի, անհրաժեշտ է վստահություն ուսուցչի նկատմամբ:

Բացասական կողմերը

Սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում ուսուցչի համագործակցության բացասական կողմերից է այն, որ ծնողները հիմնականում զբաղված են ու նրանց ժամանակը սուղ է, հաշվի է առնվում նաև պատմությաուն առարկայից ծնողների գիտելիքների մակարդակը: Հատկապես գյուղական բնակավայրերում ծնողները ավելի զբաղված են կենցաղում, և՛ պակաս ի վիճակի՝ են միջոցներ և ժամանակ տրամադրելու երեխայի պատմական գիտելիքների զարգացման համար::

Ուսուցիչների և ծնողների մոտեցումները և՛ առհասարակ ուսուցման, և՛ կոնկրետ թեմայի կամ որևէ գիտելիքի նկատմամբ կարող են տարբեր լինել, ուստի ծնողի միջամտությունը կարող է խանգարել ուսուցչի աշխատանքին:

3. Փորձարարական հետազոտություն

3.1-Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքն անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Գետաշենի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում, սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ կրթության կազմակերպման շուրջ համագործակցության շրջանակներում:

Հաշվի առնելով դասարանի որոշ աշակերտների թույլ առաջադիմությունը, ես որոշեցի կիրառել «**Ոլորահատ սղոց**» մեզ արդեն ծանոթ մեթոդը:

Այս դասարանում սովորում են 29 աշակերտ՝ 9 աղջիկ և 20 տղա, որոնք ունեն տարբեր ընդունակություններ:

Երաժշտություն առարկան անցնում են շաբաթական 2 ժամ, այն դասացուցակում տեղադրված է 3 և 4-րդ ժամերին:

Այս դասարանի հիմնական խնդիրները.

- Թեման հանգամանալից պատասխանելու և վերլուծելու կարողականությունն է
- Ակտիվ մասնակցությունը դասապրոցեսին:

3.2-Փորձարարական դասեր

3.2.1-Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը՝«Հայաստանի անկախության ամրապնդման պայքարը Սմբատ Ի-ի և Աշոտ Երկաթի օրոք»:

Քանի որ ընտրված է «**Ոլորահատ սղոց**» մեթոդը, աշակերտներին բաժանեցի երեք խմբի և հանձնարարեցի մի քանի անգամ լավ ուսումնասիրել դասի թեման: Դասը սկսվեց նախ հարցերի միջոցով աշակերտների պատրաստվածության մակարդակը ստուգելով, այնուհետև ծավալվեց քննարկում երեք խմբերի միջև: Միջառարկայական կապն ապահովելու և թեման սովորողներին ավելի հասկանալի դարձնելու համար՝ Դասարանում քննարկվեց նաև Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը:

Այնուհետև սովորողները՝ դասպրոցեսին ներկա ծնողների ներկայությամբ սկսեցին առաջարկված մեթոդով պատասխանել դասը:
Այդ մեթոդի արդյունքում հաջողվեց ամբողջ դասարանին ներգրավվել դասապրոցեսում:
Սովորողները կարողացան ապահովել միջառկայական կապը՝ պատմության և , գրականության միջև:

Դասապրոցեսն ավարտելուց հետո, բացատրեցի նոր դասը և աշակերտներին հանձնարարեցի «**ոլորահատ սղոց**» մեթոդով, տանը պատրաստել նոր թեման: Միավորային գնահատականներ ստացան աշակերտներից հինգը:

3.2.2-Փորձարարական դաս-2

Հասկանալու համար, թե ծնողները տանը, որքանո՞վ են նպաստել աշակերտների դասապատրաստմանը՝ դասը սկսեցի, նախորդ թեմայի վերաբերյալ հարցեր տալով և թեմայի վերաբերյալ քննարկմամբ:Այնուհետև օգտագործելով «ոլորահատ սղոց» մեթոդը, աշակերտներն սկսեցին տրված նյութը ակտիվ քննարկել, և վերլուծել: Աշակերտները դասագրքից կարդացին իրենց առավել հետաքրքրած հատվածները, վերլուծեցին դրանց պատմական նշանակությունը:
Դասի վերջում հանձնարարվեց թեմայի ամփոփում՝ վեց աշակերտներ արժանացան միավորային գնահատականների:

4. Եզրակացություն

Կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում, սովորողների ծնողների հետ համագործակցության արդյունավետությունը ստուգելու համար, նրանց հետ միասին անցկացրեցի երկու փորձարարական հետազոտական դասեր՝ «Ոլորահատ սղոց» մեթոդով: Թե աշակերտները և թե ծնողները խոստովանեցին, որ իրենց դուր եկավ «ոլորոհատ սղոց» մեթոդը, որի շնորհիվ երեխանը դասարանում ուսուցչի՝ իսկ տանը՝ ծնողների օգնությամբ ծանոթացան հանձնարարված թեմային, ապահովեցին միջառկայական կապը գրականության, և պատմության զուգահեռներ անցկացրեցին Բագրատունի առաջին արքաների և նրանց նախորդած մյուս հարստությունների գահակալների միջև:

Երկու փորձարարական հետազոտությունների արդյունքում, եկա այն եզրակացության, որ կրթության կազմակերպման հարցերում սովորողների ծնողների հետ համագործակցությունը բավականին արդյունավետ է, որովհետև դրա շնորհիվ՝ աշակերտների հետ աշխատանքն ամբողջացվեց, առավել պասսիվ աշակերտվերը ներգրավվեցին դասապրոցեսին, մասնակցելով քննարկումներին և հարց ու պատասխաններին:

Միաժամանակ համոզվեցի, որ ծնողների հետ համագործակցությունը բարձրացնում է ծնողներիի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխաներիի մասին, և ըստ այդմ էլ յուրքանչյուր երեխայի համար մշակել անհատական մոտեցման մեթոդ:

5. Օգտագործած գրականության ցանկ

1.Մանասյան Ն., «Հանրակրթության արժեքային համակարգը» Մանկավարժություն, N1-2, 7-14 էջ, 2004թ.:

2. Նազարյան Ա., «Մշակույթը և ազգային արժեքների ստեղծումը, պահպանումն ու ժառանգականության ապահովումը», Հայագիտությունը դպրոցում, N3-4, 6-11 էջ, 2007թ.:

3. Կուզմինա Ն.Վ. Էսսեներ ուսուցչի աշխատանքի հոգեբանության վերաբերյալ. ուսուցչի գործունեության հոգեբանական կառուցվածքը և նրա անձի ձևավորումը / Ն.Վ. Կուզմինա. - Լ.: Լենինգրադի համալսարան, 1967. - 182 էջ.

4. Հայոց պատմություն 7-րդ դասարան., խմբ. Ա. Մելքանյան. , Ե., 2014

6. Հավելված

Դասապլան-1

Առարկա	Հայոց պատմություն	Ամսաթիվ	12.05.2022	Կիսամյակ	II	Դասարան	VII
Թեմա	Հայաստանի անկախության ամրապնդման պայքարը Սմբատ I-ի և Աշոտ Երկաթի օրոք: Սմբատ I-ի պայքարը պետական անկախության պահպանման համար Արաբների դեմ պայքարի հաղթական ավարտը: Աշոտ Երկաթ Ուսուցանել Բագրատունյաց Հայաստանի վերելքը X դարի կեսերին և XI դարի սկզբներին						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, գրատախտակ, համակարգիչ						
Դասի նպատակը	Ծանոթացնել հայոց միջնադարյան պատմության Բագրատունյաց դարաշրջանի հետ Կարևորել Բագրատունի արքաների ներդրումը հայկական պետաանության կերտման և IX- X- XI դարերում հայկական մշակույթի ու տնտեսության զարգացման գործում Ձևավորել հմտություններ հայոց պատմության վերաբերյալ ինքնուրույն եզրահանգումներ կատարելու, բնութագրելու, վերլուծելու						

Վերջնար-դյունքները	Հաղորդակցվի հայոց պատմության մի կարևոր ժամանակաշրջանի հետ Ձևավորվի պատկերացում Բագրատունյաց արքայատոհմի և նրա կառավարման ժամանակաշրջանի վերաբերյալ Դրսևորվի հետաքրքրություն հայոց պատմության նկատմամբ Արժևորի հայոց պատմությունը

Գործողություններ ժամ/տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ/ծնողներ	Հարցադրումներ	Կիրառվող Մեթոդներ
5ր	Դասը սկսվեց հարց ու պատասխանով, աշա-ներտները վերհիշեցին նախորդ դասի թեման	Ողջունել Հարցադրումներ	Ո՞րն էր նախորդ դասի թեման	

20ր	Աշակերտները «Ոլորահատ սղոց» մեթոդով սկսեցին քննարկել տրված թեման Աշոտ Երկաթի կերպարն ու գործունեությունը Վերլուծեցին, բնութա-գրեցին,համեմատե-ցին, կարծիքներ հայտնեցին: Ծանոթ. Սմբատ I-ի և Աշոտ Երկաթի կառավարման ժամանակաշրջանին	Հարցադրումներով պասսիվ աշակերտներին ևս ներգրավվել ընդգրկել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցեր	Ո՞վ է Աշոտ I-ը Ի՞նչ գործունեություն էր ծավալել Աշոտ I-ը դեռևս մինչև թագավոր հռչակվելը Սիրու՞մ ես հայոց պատմությունը Ո՞վ է Աշետ I-ին թագավոր հռչակելու նախաձեռնությամբ ժողով հրավիրած հայոց կաթողիկոսը	Հարցադրու-մների մեթոդ
5ր	Սովորեցին նոր դասը	Կատարել ճշտումներ և շտկումներ	Ե՞րբ Աշոտ I-ը թագավոր հռչակվեց Ո՞ր իրադարձությունը հատկապես քեզ հետաքրքրեց	
10ր	Մինչ Աշոտ I-նն ու Աշոտ I-ի իշխանապետությունն ընկած ժամանակահատվածը ներկայացրին և վերլուծեցին	Հետևել աշակերտներին	Ի՞նչ գործունեություն ծավալեց Աշոը I-ը, որես արքա	«Ոլորահատ սղոց» մեթոդ

5ր	Համեմատեցին իշխանական և արքայական գործունեությունը		Հետադարձ կապ Աշոտ I-ը, ո՞ր քաղաքը դարձրեց սպարապետանիստ քաղաք	

Դասապլան-2

Առարկա	Հայոց պատմություն	Ամսաթիվ	13.05.2022	Կիսամյակ	II	Դասարան	VII
Թեմա	Բագրատունյաց Հայաստանի վերելքը X դարի կեսերին և XI դարի սկզբներին Հայոց թագավորության վերելքը Թագավորությունը հզորության գագաթնակետին:Գագիկ I Ուսուցանել Անիի թագավորության տրոհումն ու անկումը						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, գրատախտակ, համակարգիչ						
Դասի նպատակը	Ծանոթանալ Բագրատունյաց արքաների ու թագուհիների շինարարական գործունեության հետ Իմանալ և ճանաչել նրանց հովանավորությամբ կառուցված պատմական կոթողները						
Վերջնարդյունքները	Իմանա Բագրատունյաց յուրքանչյուր արքայի օրոք կատարված պատմական անցքերը Իրադարձությունները վերլուծի և կատարի ինքնուրույն եզրահանգումներ Համեմատական անցկացնի Բագրատունի առաջին և վերջին գահակալների միջև և ճիշտ գնահատական տա նրանցից յուրքանչյուրին						

Գործողություններ ժամ/տևող-ություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5ր	Դասը սկսվեց հարց ու պատասխանով Աշակերտները վերհիշեցին նախորդ դասի թեման	Ողջունել դասարանին Հարցադրումներ	Ո՞րն էր անցած դասի թեման Ո՞վ Սմբատ I-ը	Հարցադրում-ների մեթոդ
15ր	Օգտագործելով «Ոլորահատ սղոց» մեթոդը աշակերտներն սկսեցին ակտիվ քննարկել, Համեմատականներ անցկանցնել անցածի և նորի միջև, բնութագրեցին կերպարները , կարծիքներ հայտնեցին Ծանոթացան Գևորգ Մարզպետունու կերպարի հետ	Խրախուսել և գովեստի խոսքերով բարձրացնել աշակերտների մոտիվացիան, հետաքրքրու-թյունն ու շահագրգռվածությունը Աշակերտներին ներգրավվել դասապրոցեսին Տալ ուղղորդող	Ո՞վ է գրել «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը, ի՞նչ կապ ունի այդ պատմավեպը Բագրատունյաց Հայաստանի հետ Ի՞նչ գիտես Աշոտ Երկաթի մասին	Քննարկումներ «Ոլորահատ սղոց» մեթոդ

		հարցեր	Ձեզ դու՞ր է գալիս Աշոտ Երկաթի՞ թե Սմբատ Ի-ի կերպարը	
15ր	Միջառարկայական կապ ստեղծվեց գրականության հետ Քննարկեցին, համեմատեցին Աշոտ Երկաթի և Սմբատ Ի-ի կերպարները Բացեցին գրքեր Կարդացին նոր նյութի համապա-տասխան տեքստը Նոր ուսուցանվող դասը սովորեցին առանձին հատվածներով	Հետևել դասին Հետևել աշակերտներին Կատարել ճշտումներ և շտկումներ	Բագրատունյաց ո՞ր արքային կնմանվեիր Գնահատու՞մ ես Բագրատունի արքաների գործունեությունը	Բանավոր կրկնության մեթոդ
10ր	Կատարեցին եզրահանգումներ Պատասխանեցին գրքում գրված հարցերին(հարցեր և առաջադրանքներ բաժնից) Վերջում ամփոփեցին ընդհանուր,	Կատարել ճշտումներ և շտկումներ Հարցադրումներ	Ձեզ դուր եկա՞վ հայոց պատմության այս ժամանակահատվածը Սիրու՞մ եք	Հարց ու պատասխան մեթոդ

	գլխավոր թեման		պատմավեպեր	